

որ պղծեալ կերակրէն կամաւորապէս ճաշակող քահանայն երկու տարի ապաշխարէ. մին « սրբապահոշրեամբ » եւ միւսը « շարարապահոշրեամբ » (Ե), որոց բացատրութիւնը տեսանք յառաջագոյն (404): Դարձեալ ուրիշ նման մեղաց համար կը պատուիրէ՝ որ երեք շաբաթ « պահօք ապաշխարեսցեն ». եւ կամ երեք տարի « սրբապահոշրեամբ » եկեղեցիէն դուրս, եւ երկու տարի « շարարապահոշրեամբ » ներսն անցնեն (ԻԵ, ԿԵ): Սոյնպիսի պահքեր սահմանած են նաեւ Մխ. Գոշ (Խրտ. Պտր.) եւ Յովհ. Եզնկացին (Խրտ. ՓԷ):

12. — Դիւանարք: — Ասոնց բժշկութեան իբր հնարք ցուցուած է Աւետարանէն՝ աղօթք եւ պահք (Մտթ. ՓԵ, 20), ծանօթ նաեւ Հրէից մէջ (Տոր. Գ, 10), զոր եկեղեցին ալ կը շարունակէր գործադրել: « Զինչ են երզմունք դիւաց », կը հարցնէ Մանդակունին, եւ կը պատասխանէ. « Ո՛չ ապաքէն պահք եւ աղօթք հաւատովք » (192): Եզնիկ նոյնը կը հաստատէ, ըսելով՝ թէ դիւաց բոլոր գունդերն « ի պահոց եւ յաղօթից փախստական զրնան » (85): Այդ Հարց հետ կը միաբանի եւ Եղիշէ, ըսելով՝ թէ այդ տանջանաց մատնուած եղկելեաց՝ « ձեզնի ի պահոց պիտի » (298): Եւ պահողն էր նոյն ինքն